ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 03-2020
28.08.2013թ. կնքված Բնական գազի մատակարարման
(Մատակարար – Բաժանորդ (կազմակերպություն))
N ARG Ա 19 0 08 13 0006 Պայմանագրի

ք. Երևան **19 .10 .2020թ.**

Մատակարար՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ն, ի դեմս Վարչության նախագահ - Գլխավոր տնօրեն Հ. Թադևոսյանի, որը գործում է Կանոնադրության հիման վրա և որի անունից «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ 23.04.2018թ. N: 01-20/1568 լիազորագրի հիման վրա գործում է Գլխավոր տնօրենի տեղակալ Ա.Գևորգյանը, մի կողմից, և **Բաժանորդ**՝ ՀՀ Պաշտպանության նախարարությունը, ի դեմս Պաշտպանության նախարարության ՆՏԱ գլխավոր վարչության պետ Ն.Յոլչյանի, որը գործում է նախարարության Կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, համատեղ կոչվելով Կողմեր, կնքեցին սույն Համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 3 հավելվածի՝ Հաշվառքի սարքի /կայանի/ տվյալները աղյուսակի հետևյալ տողերը փոփոխել՝ շարադրել հետևյալ խմբագրությամբ.

ՀՀ	Ջրամասերի			Հաշվառքային սարքի		
	բաժ. համարը	համարը	տեղակայման վայրը	տիպը	գործարանային համարը	տեղադրման տարեթիվը
4	13002998	ՊՆ ԳԿ ՎՇՇ և ՍԲ	Երևան	G - 160	0041381	2018թ.
5	17002998	ՊՆ ԳԿ ՎՇՇ և ՍԲ	Երևան	G - 10	10000133	2019թ.

2. Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից:

3. Կողմերը սահմանում են, որ սույն Համաձայնագրի պայմանները կիրառվում են 2020թ. սեպտեմբերի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ (հիմք ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի հոդ. 441, 2-րդ կետ):

4. Սույն Համաձայնագիրը գործում է Պայմանագրի գործողության ժամկետում:

5. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է 28.08.2013թ. կնքված Բնական գազի մատակարարման (Մատակարար – Բաժանորդ (կազմակերպություն)) N ARG Ա19 0 08 13 0006 Պայմանագրի անբաժանելի մասը:

6. Սույն Համաձայնագիրը կնքված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից, մեկական օրինակ յուրաքանչյուր կողմի համար:

Մատակարար

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Լիազորված անձ
Լիազորագիր՝ N:01-20/1568, տրված՝ 23.04.2018թ.
Գլխավոր տնօրենի տեղակալ

Ա. Գևորգյան

Բաժանորդ

ՀՀ պաշտպանության նախարարություն
Պաշտպանության նախարարության ՆՏԱ
գլխավոր վարչության պետ

Ն.Յոլչյան